

ԲՈՒՀԻ ՀԵՇԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆ



2024

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը



Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-զրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-զրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնայով նշել պատասխանների ձևաթուղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Որտե՞ղ է զարգանում ծաղկավոր բույսի ձվարջիջը.

- 1) Էնդոսպերմում
- 2) Սաղմնապարկում
- 3) Փոշեխողովակում
- 4) Փոշեհատիկում

2 Որո՞նք են նախակորիզավորներ.

- 1) Նախակենդանիները
- 2) Սնկերը
- 3) Վիրուսները
- 4) Բակտերիաները

3 Ի՞նչ հաջորդական փուլերով է ընթանում միջատների լրիվ կերպարանափոխությունը.

- 1) Ճու, հարսնյակ, բրթուր, հասուն միջատ
- 2) Հասուն միջատ, ճու, հարսնյակ, բրթուր
- 3) Հասուն միջատ, բրթուր, ճու, հարսնյակ
- 4) Ճու, բրթուր, հարսնյակ, հասուն միջատ

4 Որո՞նք են սպիտակ պլանարիայի արտաքորության օրգանները.

- 1) մալպիզիան անոթները
- 2) Երիկամները
- 3) նախաերիկամները
- 4) աստղաձև բջիջները

5 Ինչպե՞ս է ուկրային ճկան ողնաշարը միացած գանգին.

- 1) անշարժ
- 2) կիսաշարժուն մեկ պարանոցային ողով
- 3) կիսաշարժուն երկու պարանոցային ողերով
- 4) շարժուն երկու պարանոցային ողերով

6 Ի՞նչ է բնորոշ պայմանական ռեֆլեքսներին.

- 1) Ժառանգվում են
- 2) անհատական են
- 3) բնորոշ են բոլոր մարդկանց
- 4) մշտական են

7 Մարդու օրգանիզմում որտե՞ղ են գտնվում շարժողական նեյրոնների մարմինները.

- 1) ողնուղեղի սպիտակ նյութում և հետևի արմատիկում
- 2) ողնուղեղի գորշ նյութի հետևի եղջյուրներում
- 3) ողնուղեղային հանգույցներում
- 4) ողնուղեղի գորշ նյութի առջևի եղջյուրներում

8 Մարդու ո՞ր հորմոնի հավելյալ քանակն է առաջացնում հսկայություն.

- 1) աճի հորմոնի
- 2) թիրօքսինի
- 3) գլյուկազոնի
- 4) աղբենալինի

9 Մարդու գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի ո՞ր բլթում է գտնվում լսողական գոտին.

- 1) քունքային
- 2) ծոծրակային
- 3) ճակատային
- 4) գագաթային

10 Մարդու ո՞ր մկանները միջաձիգ գոլավոր չեն.

- 1) լեզվի
- 2) դեմքի
- 3) կերակրափողի ստորին մասի
- 4) ստոծանու

11 Ինչերի՞ մասնակցությամբ է ֆիբրինոգենը վերածվում ֆիբրինի մարդու օրգանիզմում.

- 1) թրոմբին և պեպսին ֆերմենտների
- 2) ցածր ջերմաստիճանի և կալիումի աղերի
- 3) կալցիումի աղերի և թրոմբին ֆերմենտի
- 4) կալիումի աղերի և պտիալին ֆերմենտի

12 Որտե՞ղ է մարդու սրտում գտնվում երկփեղկ փականը.

- 1) առրտայի ներսում
- 2) ձախ նախասրտի և ձախ փորոքի բացվածքի սահմանում
- 3) վերին սիներակի մուտքի հարևանությամբ
- 4) աջ նախասրտի և աջ փորոքի բացվածքի սահմանում

13

Մարդու մաշկի ո՞ր շերտում են գտնվում քրտնագեղձերը.

- 1) Ենթամաշկային բջջանքում և էպիդերմիսի մահացած բջիջների շերտում
- 2) բուն մաշկում
- 3) մելանին սինթեզող մահացած բջիջների շերտում
- 4) վերնամաշկում

14

Ինչո՞ւ ստամոքսի պատերը չեն մարսվում ստամոքսահյութի ազդեցության տակ.

- 1) ստամոքսահյութն ունի հիմնային ռեակցիա, մինչդեռ սպիտակուցներ ճեղքող ֆերմենտներն ակտիվ են բրվային միջավայրում
- 2) ստամոքսահյութում բացակայում են սպիտակուցները ճեղքող ֆերմենտները
- 3) մարսողական ֆերմենտները չեն կարող մարսել տվյալ օրգանիզմում սինթեզված սպիտակուցները
- 4) ստամոքսի ներքին մակերևույթը պատված է լորձով

15

Ո՞ր վիտամինը կարևոր նշանակություն ունի մարդու բնականոն աճի և մքնշաղին տեսողության ապահովման համար.

- 1) D
- 2) A
- 3) B₁
- 4) C

16

Մարդու օրգանիզմում որտե՞ղ է ձևավորվում առաջնային մեզը.

- 1) մեզը հավաքող խողովակում
- 2) պատիճի մազանոքներով հոսող արյան մեջ
- 3) երիկամի ավագանում
- 4) երիկամի կեղևային շերտում

17

Ո՞ր դեպքում է ճիշտ նշված ԴՆԹ-ի կազմում գտնվող նուկլեոտիդներից մեկի կազմությունը.

- 1) թիմին - դեօքսիոխրոզ - ֆոսֆորական թրվի մնացորդ
- 2) ցիտոզին - ոլիոզ - ֆոսֆորական թրվի մնացորդ
- 3) ուրացիլ - դեօքսիոխրոզ - ֆոսֆորական թրվի մնացորդ
- 4) գուանին - ոլիոզ - ֆոսֆորական թրվի մնացորդ

18

Ո՞ր շարքում են թվարկված միայն միաշաքարներ.

- 1) գալակտոզը, էրիթրոզը, քսիլոզը
- 2) գլյուկոզը, ցելյուլոզը, ռիբոզը
- 3) ռիբոզը, դեզօքսիռիբոզը, իմիտինը
- 4) ֆրուկտոզը, ռիբոզը, գլիկոզենը

19

Հեղուկի կաթիլներում լուծված կամ կախյալ վիճակում գտնվող նյութերը պլազմային թաղանթի միջոցով բջիջ են թափանցում.

- 1) ռիֆուզիայի ճանապարհով
- 2) պինոցիտոզի միջոցով
- 3) ֆազոցիտոզի միջոցով
- 4) առանց արտաքին էներգիայի ծախսի

20

Ածխաջրերի սինթեզն իրականանում է՝

- 1) հատիկավոր էնդոպլազմային ցանցում
- 2) բջջային կենտրոնում
- 3) ռիբոսոմներում
- 4) հարթ էնդոպլազմային ցանցում

21

Բջջի օրգանիզմերից ո՞րն է անմիջականորեն կապված բջջային շնչառության հետ.

- 1) լիզոսոմը
- 2) ռիբոսոմը
- 3) միտոքրոնալիումը
- 4) բջջային կենտրոնը

22

Ո՞ր գործընթացներն են տեղի ունենում ֆոտոսինթեզի լուսային փուլի ընթացքում.

- 1) ԱԵՖ-ի սինթեզ, ատոմային ջրածնի և ածխաջրերի առաջացում
- 2) մոլեկուլային թթվածնի, ատոմային ջրածնի և ածխաջրերի առաջացում
- 3) մոլեկուլային թթվածնի առաջացում, ԱԵՖ-ի և ածխաջրերի սինթեզ
- 4) ԱԵՖ-ի սինթեզ, մոլեկուլային թթվածնի և ատոմային ջրածնի առաջացում

23

Ի՞նչ պրոցեսներ են բնորոշ միտոզի քելոֆազին.

- 1) քրոմոսոմների դասավորում իլիկի հասարակածային հարթությունում
- 2) դուստր քրոմոսոմների հեռացում միմյանցից և տարամիտում դեպի բջջի բնեղներ
- 3) քրոմոսոնների ապապարուրում և միահյուսում իրար, կորիզաթաղանթի ձևավորում
- 4) քրոմոսոմների պարուրում և միահյուսում իրար, կորիզաթաղանթի տարրալուծում

24

Ո՞ր օրգանիզմներին է բնորոշ բոլորջման միջոցով բազմացումը.

- 1) տափակ որդերին
- 2) խմորասնկերին, սողուններին, բույսերին
- 3) ծովաստղերին, որոշ ջրիմուններին, ինֆուզորիաներին
- 4) խմորասնկերին, հիդրաներին, հիդրոիդ և կորալյան պոլիպներին

25

Ինչո՞վ է պայմանավորված բույսերի ցիտոպլազմային արական ամլությունը.

- 1) փոշեհատիկի միտոքոնդրիումների ԴՆԹ-ի մուտացիաներով
- 2) փոշեհատիկի երկու սպերմիումներից մեկի ոչնչացմամբ
- 3) սաղմնապարկում ձվաբջջի բացակայությամբ
- 4) սաղմնապարկում կենտրոնական բջջի բացակայությամբ

26

Ինչպե՞ս է կոչվում օրգանիզմների հատկանիշները և զարգացման առանձնահատկությունները հաջորդ սերունդներին փոխանցելու հատկությունը.

- 1) փոփոխականություն
- 2) գենոտիպ
- 3) ֆենոտիպ
- 4) ժառանգականություն

27

Ի՞նչ ֆենոտիպային առանձնահատկություն է դրսեռվում ոչ լրիվ դրմինանության դեպքում.

- 1) հետերոզիգոտ առանձնյակները ֆենոտիպով չեն տարբերվում ըստ ռեցեսիվ գենի հոմոզիգոտ առանձնյակներից
- 2) հետերոզիգոտ առանձնյակները արտաքինից տարբերվում են ըստ դրմինանտ գենի հոմոզիգոտ առանձնյակներից
- 3) հետերոզիգոտ առանձնյակները ֆենոտիպով չեն տարբերվում ըստ դրմինանտ գենի հոմոզիգոտ առանձնյակներից
- 4) ըստ ռեցեսիվ գենի հոմոզիգոտ առանձնյակները արտաքինից չեն տարբերվում ըստ դրմինանտ գենի հոմոզիգոտ առանձնյակներից

28

Ինչի՞ է հավասար կանաչ գույնի հարք սերմեր ունեցող ոլորի հնարավոր գենոտիպայի թիվը.

- 1) չորսի
- 2) մեկի
- 3) երկուսի
- 4) երեքի

29

Չանի՞ ֆենոտիպային և գենոտիպային խմբեր են ստացվում երկու երկինտերոզիզոտ առանձնյակների խաչասերման արդյունքում՝ գույզ ալելներով լրիվ դոմինանտուրյան և գեների անկախ բաշխման դեպքում.

- 1) 16 ֆենոտիպային և 4 գենոտիպային ձևեր
- 2) 4 ֆենոտիպային և 9 գենոտիպային ձևեր
- 3) 9 ֆենոտիպային և 4 գենոտիպային ձևեր
- 4) 4 ֆենոտիպային և 16 գենոտիպային ձևեր

30

Ի՞նչ է ընկած անեռուպոխիայի հիմքում.

- 1) քրոմոսոմների թվաքանակի պահպանումը
- 2) քրոմոսոմների թվաքանակի բազմապատիկ անգամ փոքրացումը
- 3) քրոմոսոմների թվաքանակի ոչ բազմապատիկ անգամ փոփոխումը
- 4) քրոմոսոմների թվաքանակի բազմապատիկ անգամ մեծացումը

31

Փոփոխականուրյան ո՞ր ձևն է պայմանավորում Կովկասում և Սիրիում ապրող սկյուռների արտաքին տարբերությունները.

- 1) ոչ աղապտիվ
- 2) մուտացիոն և տարիքային
- 3) աշխարհագրական
- 4) տարիքային

32

Ո՞ր բակտերիաներն են օգտագործում ազոտային թթուն ազոտականի օքսիդացնելու ժամանակ անջատվող էներգիան.

- 1) սիմբիոտիկ պալարաբակտերիաները
- 2) ազոտ ֆիլսող
- 3) նիտրիֆիլացնող
- 4) ամոնիֆիլացնող

33

Նշված էվոլյուցիոն փոփոխություններից ո՞րն է արտմորֆոզ.

- 1) թրթուրների հովանավորող գունավորման առաջացումը
- 2) կենդանիների օրգանիզմում քորդայի առաջացումը
- 3) միջատների բերանային ապարատի ձևափոխությունները
- 4) մերձհատակյա կենսակերպ վարող ձկների մարմնի տափակությունը

34

Ո՞րն է կենսածին էկոլոգիական գործոն.

- 1) օրվա տևողությունը
- 2) մթնոլորտային ճնշումը
- 3) մակարուծությունը
- 4) ռադիոակտիվ ճառագայթումը

35

Ավստրալիայում Եվլոպայից բերված մեղվասու մեղրուն դուրս է մղել խայթից գուրկ տեղական մեղվին: Սա փոխհարաբերությունների ո՞ր ձևն է.

- 1) ներտեսակային մրցակցություն
- 2) ներտեսակային գոյության կոիկ
- 3) միջտեսակային գոյության կոիկ
- 4) պայքար անօրգանական աշխարհի անբարենպաստ պայմանների դեմ

36

Ո՞րն է էկոհամակարգերի երկրորդային արտադրանքը.

- 1) էկոհամակարգը կազմող բոլոր կենդանի օրգանիզմների գումարային զանգվածը
- 2) պրոդրուցենտրների կենսազանգվածի աճը միավոր ժամանակում
- 3) ռեդուցենտրների և պրոդրուցենտրների կենսազանգվածի ավելացման արագությունը
- 4) կոնսումենտների կենսազանգվածի ավելացման արագությունը

- (37-38) ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածը կազմված է 9240 նուկլեոտիդներից, իսկ $A+T / G+C$ քանակական հարաբերությունն այդ հատվածում հավասար է 1,2-ի:

37 Գտնել աղենինային նուկլեոտիդի քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում.

- 1) 5040
- 2) 1260
- 3) 2100
- 4) 2520

38 Գտնել ցիտոզինային նուկլեոտիդի քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում.

- 1) 2100
- 2) 2520
- 3) 1260
- 4) 1050

(39-40) Խաչասերել են ապահովագործություն առանձնյակներ: Ալելային գեների առաջին երեք զույգերում առկա է ոչ լրիվ դոմինանտուրյուն, իսկ վերջին երեքում՝ լրիվ: Տվյալ հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարրեր զույգերում:

39 Գտնել սերնդում հնարավոր գենոտիպերի թիվը.

- 1) 108
- 2) 24
- 3) 48
- 4) 54

40 Գտնել սերնդում հնարավոր ֆենոտիպերի թիվը.

- 1) 108
- 2) 24
- 3) 48
- 4) 54

41 Մարդու արյան ո՞ր ձևավոր տարրին (նշված է աջ սյունակում) ո՞ր բնութագիրն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Բնութագիր

Ձևավոր տարր

- | | |
|--|--------------|
| A. ընդունակ է ֆազոցիտոզի | 1. լեյկոցիտ |
| B. արյան ամենափոքր ձևավոր տարրն է | 2. թրոմբոցիտ |
| C. չունի կայուն ձև | 3. էրիթրոցիտ |
| D. կյանքի տևողությունը 120-130 օր է | |
| E. պարունակում է հեմոգլոբին | |
| F. ունի երկու կողմից ներհրված սկավառակի տեսք | |
| G. չափսերով ամենամեծն է | |

42 Մարդու ո՞ր ոսկորը (նշված է ձախ սյունակում) կմախքի ո՞ր բաժնի կազմի մեջ է (նշված է աջ սյունակում) մտնում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Կմախքի բաժին

Ոսկոր

- | | |
|---------------|--------------------------|
| A. կող | 1. ստորին ազատ վերջույթ |
| B. քիակ | 2. ստորին վերջույթի գոտի |
| C. կոնքոսկը | 3. վերին ազատ վերջույթ |
| D. մեծ ոլոք | 4. իրան |
| E. ճաճանչոսկը | 5. վերին վերջույթի գոտի |
| F. կրծոսկը | |
| G. անրակ | |
| H. բազկոսկը | |

43 Սաղմնային գարզացման ընթացքում ո՞ր օրգանը, հյուսվածքը (նշված է ձախ սյունակում) սաղմնային ո՞ր թերթիկից է (նշված է աջ սյունակում) առաջանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրգան, հյուսվածք

- A. խոիկների էպիթել
- B. ատամների էմալ
- C. նյարդ
- D. աղիքի էպիթել
- E. ոսկոր
- F. երիկամ
- G. մաշկի էպիթել
- H. կմախքի կոճիկային տարրեր

Սաղմնային թերթիկ

- 1. մեզոդերմ
- 2. էկտոդերմ
- 3. էնտոդերմ

44 Չափանիշի ո՞ր բնութագիրը (նշված է ձախ սյունակում) տեսակի ո՞ր չափանիշին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Չափանիշի բնութագիր

- A. առանձնյակների բազմացման նմանություն
- B. տեսակը կարող է գոյատևել միջավայրի միայն որոշակի պայմաններում
- C. քրոմոսոմների բնորոշ հավաքակազմ
- D. առանձնյակների արտաքին և ներքին կառուցվածքների նմանություն
- E. տեսակը զբաղեցնում է խիստ որոշակի արեալ
- F. սպիտակուցների և նուկլեինաքրուների բնորոշ կառուցվածք և կազմ

Տեսակի չափանիշ

- 1. Էկոլոգիական
- 2. կենսաքիմիական
- 3. ձևաբանական
- 4. ֆիզիոլոգիական
- 5. գենետիկական
- 6. աշխարհագրական

45

Ո՞ր առանձնահատկությունը (նշված է ձախ սյունակում) ո՞ր օրգանիզմներին (նշված է աջ նասում) է առավել բնորոշ: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Առանձնահատկություն

Օրգանիզմներ

- | | |
|--|------------|
| A. քջիջներում գլիկոզեն է կուտակվում | 1. բույսեր |
| B. էկոհամակարգում ռեդուցենտների դեր են կատարում | 2. սնկեր |
| C. ունեն ավտոտրոֆ սննդառություն | |
| D. էկոհամակարգում պրոդուցենտների դեր են կատարում | |
| E. ունեն հետերոտրոֆ սննդառություն | |
| F. արտազատում են միզանյոթ | |
| G. քաղմանում են սերմերով | |

46

Ինչպիսի՞ն է ալրոցեսմերի հաջորդականությունը բույսերի օրգանիզմում սպիտակուցի մոլեկուլի առաջացման ժամանակ.

1. հիդրոֆոր և -S-S- կովալենտ կապերի առաջացում
2. սպիտակուցի տարածական կառուցվածքի առաջացում
3. ջրի և անօրգանական աղերի ներծծում արմատի միջոցով
4. ամինաթթուների միջև ջրածնային կապերի առաջացում
5. ամինաթթուների սինթեզ՝ անօրգանական նյութերից
6. ամինաթթուների միջև պեպտիդային կապերի առաջացում

47

Ինչպիսի՞ն է աճման գոտի անցած քջի հետ կատարվող վերափոխումների հաջորդականությունը զամետողենեղի ընթացքում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. քրոմոսոմների տարամիտում
2. n2c հավաքակազմով քջիջների առաջացում
3. նուկլեոտիդների միջև կովալենտ կապերի խզում
4. հոմոլոգ քրոմոսոմների կոնյուգացիա
5. սպերմատիդների առաջացում
6. քրոմատիդների տարամիտում
7. ԴՆԹ-ի քանակի կրկնապատկում

48

Ո՞րն է կաթնասունների ողնաշարի բաժինների ճիշտ հաջորդականությունը՝ սկսած պոչային բաժնից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. սրբանային
2. կրծքային
3. գոտկային
4. պոչային
5. պարանոցային

49

Ի՞նչ հաջորդականությամբ է արյունը շարժվում մարդու արյան շրջանառության մեջ շրջանի անոթներում՝ ձախ փորոքի կծկումից հետո: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. առրտա
2. խոշոր երակներ
3. մազանոթներ
4. խոշոր զարկերակներ
5. մանր երակներ
6. սիներակներ
7. մանր զարկերակներ

50

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում գործընթացները մարդու օրգանիզմում ցուրտ պայմաններում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. մաշկ մղվող արյան ծավալի նվազում
2. մաշկի սատնության ընկալիչների դրդում
3. մաշկի արյունատար անոթների նեղացում
4. ջերմատվության բուլացում
5. արտաքին միջավայրի ջերմաստիճանի նվազում
6. ջերմակարգավորման կենտրոնի դրդում

51

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում պրոցեսները՝ բակտերիաֆագով բակտերիայի վարակման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. բակտերիաֆագի սպիտակուցների սինթեզ
2. բջջաբաղանքի «լուծում»
3. նոր բակտերիաֆագերի ձևավորում
4. բակտերիաֆագի DNA -ի սինթեզ
5. բակտերիայի ոչնչացում
6. բակտերիաֆագի DNA -ի ներարկում բակտերիայի մեջ
7. պոչային ելունների ամրացում բջջաբաղանքին

52

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. դրոզոֆիլ պտղաճանճն օժտված է իգական հոմոզամետությամբ
2. տրամախաչումը հանգեցնում է ժառանգական փոփոխականության և քնական ընտրության արդյունավետության մեծացման
3. տրամախաչման ժամանակ քրոմոսոմները փոխանակվում են ամբողջական քրոմատիզմերով
4. հիբրիդների առաջին սերնդի միակերպության օրենքը Սենդելի առաջին օրենքն է
5. համաձայն $\text{D}\cdot\text{U}$ րգանի կատարած փորձերի՝ պտղաճանճի երկիեւտերոզիզոտ էզի և ռեցեսիվ հատկանիշներով արուի խաչասերման արդյունքում առաջին սերնդում ստացվում է չորս ֆենոտիպ՝ յուրաքանչյուրից 25 %
6. գերդոմինանութության դեպքում հոմոզիզոտ դոմինանտ գենոտիպի դեպքում դոմինանտ հատկանիշն ավելի ցայտուն է դրսնորվում, քան հետերոզիզոտ գենոտիպի դեպքում

53

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. պերօքսիտոմներն առաջանում են Գոլջիի ապարատում
2. գյուկոզի՝ մինչև պիրոխաղողաքքի ճեղքման արդյունքում անջատվում է 210 կ Ω /մոլ էներգիա, որի մեծ մասը (60 %) պահեստավորվում է ACT -ի ձևով, իսկ մյուս մասը (40 %) ցրվում է որպես ջերմային էներգիա
3. էկտոպլազմային քնորոշ է սպիտակուցային թելիկների խրձերի և տուրովին սպիտակուցից կազմված միկրոխողվակների առկայությունը
4. բջջում օրգանական նյութերը՝ ածխաջրերը, լիպիդները, սպիտակուցները, նուկլեինաթթուները սինթեզվում են անարողիզմի արդյունքում
5. շրջակա միջավայրում կախումի իոնների պարունակությունն ավելին է, քան կենդանի բջիջներում, իսկ նատրիումի իոնների պարունակությունը կենդանի բջիջներում է ավելին, քան շրջակա միջավայրում
6. գենետիկական կողը վերածածկվող չէ, քանի որ բոլոր օրգանիզմներում նույն եռյակները պայմանավորում են նույն ամինաթթուն

54

Ի՞նչն է բնորոշ մարդու լյարդին: Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. պարբերաբար արյան հուն է մղում հեպարին հակամակարդիչ նյութը
2. մարդու օրգանիզմի ամենախոշոր գեղձն է
3. մասնակցում է ածխաջրերի փոխանակությանը
4. դրունքով դուրս են գալիս լեղածորանը և դռներակը
5. սինթեզում է արյան մակարդմանը մասնակցող ֆիբրին և պրոթրոմբին սպիտակուցները
6. սպիտակուցների քայլայման արգասիքները վերափոխում է միզանյութի

55

Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր սխալ պնդումները.

1. սրտի աշխատանքն արագացնում են աղբենալինը և կալցիումի իոնները
2. լեզվի համազգաց ընկալիչներում առաջացած ազդակներն հաղորդվում են անմիջապես տեսաբումբ, որտեղից էլ մեծ կիսագնդերի կեղևի գագաթային բիլք
3. վեգետատիվ նյարդային համակարգի սիմպաթիկ բաժնի գրգռումն ակտիվացնում է լեղու արտադրությունը
4. ենթատեսաթմբում տեղադրված են կենտրոններ, որոնք վերահսկում են օրգանիզմի ներքին միջավայրի բաղադրությունը
5. արհեստական ակտիվ իմունիտետը ձևավորվում է բուժիչ շիճուկի ներարկման արդյունքում
6. հոտն ընկալվում է արտաշնչման պահին

56

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. սիմետրիկ տրանսլոկացիայի դեպքում մի քրոմոսոմի ցենտրոմեր պարունակող հատվածը միանում է մյուս քրոմոսոմի ցենտրոմեր չպարունակող հատվածի հետ
2. որքան լայն է հատկանիշի ռեակցիայի նորման, այնքան մեծ են շրջակա միջավայրին հարմարվելու օրգանիզմի հնարավորությունները
3. դրոզոֆիլ պտղաճանճի աչքերի գունավորումը սեղի հետ շղթայակցված հատկանիշ է, որը պայմանավորող գենը գտնվում է Y քրոմոսոմում
4. Y քրոմոսոմը կոչվում է արական քրոմոսոմ
5. հիբրիդների առաջին սերնդում 1:1 հարաբերությունն ըստ ֆենոտիպի ստացվում է այն դեպքում, եթե ծնողական առանձնյակներից մեկը հոմոզիգոտ է՝ ըստ դրմինանու ալելի, մյուսը՝ հոմոզիգոտ է ըստ ռեցեսիվ ալելի
6. միևնույն ծնողների երեխաների գենոտիպային և ֆենոտիպային բազմազանությունը հիմնականում համակցական կոփոխականության արդյունք է

57

Նշել բոչուններին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

1. ունեն երրորդ կոա
2. սիրտը եռախորշ է
3. տաքարյունության շնորհիվ հարմարվել են տարբեր էկոլոգիական պայմաններում ապրելուն
4. ողնաշարը կազմված է չորս բաժիններից
5. կողերը կրծոսկրին միացած են անշարժ
6. ենթանրակային մկանները մասնակցում են թևերի բարձրացմանը
7. ուղիղ աղին բացվում է կոյանոցի մեջ

58

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. ազրուկոհամակարգերը օժտված չեն իմքնակարգավորմամբ և կայունությամբ
2. բնական ընտրությունը էվոլյուցիայի շարժիչ ուժ է
3. մակրոէվոլյուցիան ավարտվում է նոր տեսակի առաջացմամբ
4. միմիկրիայի դեպքում քիչ պաշտպանված տեսակը մարմնի ձևով, գունավորմամբ ընդորինակում է պաշտպանված տեսակի հատկանիշները
5. օվկիանոսի ջրերը, նավերը և հողը դասվում են հանքային նյութերի շարքին
6. չփոփոխվող գոյության պայմաններում բնական ընտրությունը և էվոլյուցիան դադարում են
7. կրմենսալիզմը միջտեսակային փոխհարաբերությունների ձև է, որի դեպքում փոխազդող տեսակներից մեկի համար այն շահավետ է, մյուսի համար՝ անտարբեր

- (59-60) Զերմաճառագայթմամբ մաշկի միջոցով հեռանում է զերմության մինչև 60%-ը, զերմահաղորդմամբ՝ 15%-ը, իսկ գոլորշիացմամբ՝ զերմության 20%-ը: Օրվա ընթացքում զերմահաղորդմամբ մարմնից հեռացել է 735 կՎ էներգիա:

59

Քանի՞ կՎ էներգիա է հեռացել օրգանիզմից զերմաճառագայթմամբ:

60

Քանի՞ գրամ քրտինք է գոլորշիացել օրգանիզմից, եթե 1 գրամ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կՎ էներգիա:

(61-62) Մարդու օրվա ընթացքում հարաբերական հանգստի վիճակում՝ 10 ժ արթուն և 6 ժ քնած է: Աշխատանք կատարելիս շնչառությունն արագացել է 1,5 անգամ, յուրացվող թթվածնի ծավալն աճել է 25%-ով: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արթուն ժամանակ կատարում է 18 շնչառական շարժում:

61

Զանի^o լիտր թթվածին է յուրացվել օրգանիզմում արթուն ժամանակ:

62

Զանի^o լիտր թթվածին է արտաշնչվել մարդու օրգանիզմից հարաբերական հանգստի վիճակում: Պատասխանը բազմապատկել 10-ով:

- (63-64) 1 մոլ գազը զբաղեցնում է 22,4 լիտր ծավալ: 50 մ² տերևային մակերևույթ ունեցող ծառը 30 օրվա ընթացքում 16-ժամյա լուսային օրվա պայմաններում՝

63 Զանի՞ լիտր քրվածին է արտադրել այդ ընթացքում:

64 Զանի՞ լիտր CO₂ է կլանել այդ ընթացքում:

(65-66) Փոքր լճակում ձկան քանակը որոշելու համար բռնվել է 1800 ձուկ, նշվել և նորից քաց բռնվել լիճ: Որոշ ժամանակ անց բռնվել է 4500 ձուկ, որոնցից 1,2%-ը նշված էին:

65

Զանի՞ հազար առանձնյակ են միավորված տվյալ պոպուլյացիայում:

66

Որոշել տվյալ պոպուլյացիայի խտությունը (առանձ/ մ^3 -ով), եթե լճի ծավալը 500 մ^3 է:

- (67-68) Օրգանիզմում գլյուկոզի ճեղքման պրոցեսում առաջացավ 18 մոլ CO₂ և 126 մոլ ԱԵՖ: ԱԿՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋոուլ/մոլ էներգիա:

67

Քանի՞ կՋոուլ օգտակար էներգիա է կուտակվել անբթվածին փուլում:

68

Քանի՞ մոլ ջուր է անջատվել այդ ընթացքում:

69

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. մեծ կիսագնդերի կեղևում տեղակայված բարձրագույն շնչառական կենտրոնները կարգավորում են շնչառության հաճախականությունը խոսելու ընթացքում
2. բոքն արտաքինից պատված է բոքամզով, աջ բոքը մեծ է և կազմված է երկու բլթերից
3. բոքամիզը կազմված է երկու թաղանթներից՝ բոքային բոքամզային թաղանթ և մերձպատային (առպատային) բոքամզային թաղանթ
4. մերձպատային (առպատային) բոքամզային թաղանթը պատում է բոքերը ներսից և կազմված է էպիթելային հյուսվածքից
5. զազերի դիֆուզիան ընթանում է ըստ խտությունների տարբերության՝ ցածր խտության տեղամասից բարձր խտության տեղամաս
6. ածխաբբուրու զազի հետ փոխազդելով՝ հեմոգլոբինն առաջացնում է կարբոհեմոգլոբին

70

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. կորիզակներում ձևավորվում են ոիբոսումների ենթամասնիկները
2. բջջակորիզը բջջի ամենամեծ օրգանոիդն է. այն առկա է բույսերի, կենդանիների, սնկերի, բակտերիաների բջջներում
3. կաթնասունների հասուն էրիթրոցիտներում կորիզ չկա, այդ պատճառով նրանք պրոկարիոտ բջջներ են համարվում
4. կորիզակիութը իր քիմիական կազմով չի տարբերվում ցիտոպլազմայի թաղաղությունից
5. քրոմատինը ԴՆԹ-ի, հիստոնային և ոչ հիստոնային սպիտակուցների բարդ համալիր է
6. կորիզաքաղանթը և կորիզակները տեսանելի են չբաժանվող բջջներում